Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.11.2026թ. **ք. Արմավիր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի պետ՝ Մուշեղ Ղահրամանյանս ուսումնասիրելով թիվ 09327313 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08 հուլիսի 2022 թ. տրված թիվ ԵԴ/11005/17/22 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Ներսիկ Բաբիկի Մկրտչյանից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 7222960 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ, ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Կատարողական գործողությունների ընթացքում 04.11.2026թ. կայացված «Ընդհանուր գույքում պարտապանի բաժինը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ Ներսիկ Բաբիկի Մկրտչյանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Գետաշեն գյուղում գտնվող վկայականի համար թիվ 18052015-04-0013 և ՀՀ Արմավիրի մարզի, Գետաշեն գյուղում վկայականի համար թիվ 18052015-04-0027 անշարժ գույքերի 1/3 բաժնեմասերը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի համապատասխանաբար 170.544 ՀՀ դրամ և 1.519.974 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ աճուրդի սկիզբ է սահմանվել 07.12.2026թ., սակայն «Ընդհանուր գույքում պարտապանի բաժինը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ, մասնավորապես որոշման որոշեցի և պարզեցի մասերում նշված է որ անշարժ գույքերը պատկանում են Ներսիկ Բաբիկի Մկրտչյանին համատեղ սեփականության իրավունքով, սակայն պետք է նշված լիներ, որ պատկանում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, իսկ ՀՀ Արմավիրի մարզի, Գետաշեն գյուղում վկայականի համար թիվ 18052015-04-0027 անշարժ գույքի 1/3 բաժնեմասի կադաստրային արժեքը նշված է 1.899.967 ՀՀ դրամ, ակայն պետք է նշված լիներ 1.889.967 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով և «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ և 50-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վերանայել Ծառայության Արմավիրի մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Անդրանիկ Աբրահամյանի կողմից 04.11.2026թ. կայացված «Ընդհանուր գույքում պարտապանի բաժինը հարկադիր աճուրդով իրացնելու մասին» որոշումը և որոշման պարզեցի և որոշցի հատվածներում ընդհանուր համատեղ սեփականություն բառի փոխարեն կարդալ ընդհանուր բաժնային սեփականություն, իսկ ՀՀ Արմավիրի մարզի, Գետաշեն գյուղում վկայականի համար թիվ 18052015-04-0027 անշարժ գույքի 1/3 բաժնեմասի կադաստրային արժեքը 1.899.967 ՀՀ դրամի փոխարեն կարդալ

1.889.967 ՀՀ դրամ, միավորի մեկնարկային գինը՝ 1.519.974 ՀՀ դրամի փոխարեն կարդալ 1.511.974 ՀՀ դրամ:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ